Գրանցված է 16.03.11թ.
հաշ՝ 11011131

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 124 - Ն «24» 02 2011

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-ի N 527-Ն ԵՎ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 7-ի N 646-Ն ՀՐԱՄԱՆՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության խորհրդի ձևավորման կարգը»՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչությանը (պետ՝ Ռ.Աբրահամյանին) և իրավաբանական վարչությանը (պետ՝ Մ.Գրիգորյանին). սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2006 թվականի հունիսի 23-ի «Միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության խորհրդի ձևավորման կարգը հաստատելու մասին» N 527-Ն և 2008 թվականի օգոստոսի 7-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) պետական ուսումնական հաստատության խորհրդի ձևավորման կարգը հաստատելու մասին» N 646-Ն հրամանները:
4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Ա. Ավետիսյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ա. ԱՇՈՏՅԱՆ**

Հավելված
ՀՀ կրթության և գիտության նախարի
2011 թվականի փետրվարի 24-ի
թիվ 124-Ն հրամանի

Կ Ա Ր Գ

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության (այսուհետ՝ Հաստատություն) կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգը:

2. Հաստատության կոլեգիալ կառավարման մարմինը խորհուրդն է (այսուհետ՝ Խորհուրդ), որի լիազորությունների ժամկետը 5 տարի է:

II. ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

3. Խորհուրդը ձևավորվում է Հաստատության մանկավարժական կազմի, ուսանողության, հիմնադրի, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից առաջադրված ներկայացուցիչներից:

4. Խորհրդի անդամների թիվը (ոչ ավելի, քան 20) սահմանվում է Հաստատության կանոնադրությամբ:

5. Հաստատության մանկավարժական կազմից Խորհրդի անդամության թեկնածուներ է առաջարկում Հաստատության մանկավարժական կազմի ընդհանուր ժողովը.

1) Հաստատության մանկավարժական կազմի ընդհանուր ժողովի կողմից առաջադրված անձանց թեկնածությունները ներկայացվում են պետական կառավարման լիազորված մարմին (այսուհետ՝ Լիազորված մարմին),

2) Հաստատության տնօրենը չի կարող լինել նույն Հաստատության Խորհրդի անդամ,

3) Հաստատության մանկավարժական կազմից ընտրված Խորհրդի անդամները կազմում են Խորհրդի անդամների 20 տոկոսը:

6. Հաստատության ուսանողության ներկայացուցիչներից Խորհրդի անդամության թեկնածություններ է առաջարկում Հաստատության ուսանողական խորհուրդը.

1) Հաստատության ուսանողական խորհուրդն ընտրում է Հաստատության ուսանողներից առաջադրված թեկնածությունները և ներկայացնում Լիազորված մարմին,

2) ուսանողության կողմից ընտրված Խորհրդի անդամները կազմում են Խորհրդի անդամների 25 տոկոսը:

7. Հիմնադիրը կամ հիմնադրի լիազորմամբ՝ տարածքային կառավարման պետական մարմինն առաջադրում է Խորհրդի անդամների 10 տոկոսը:

8. Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ներկայացուցիչներ կարող են առաջադրվել.

1) պետական պաշտոն զբաղեցնող, գիտության, մշակույթի և տնտեսության տարբեր ոլորտների ներկայացուցիչներ՝ 10 տոկոս,

2) սոցիալական գործընկերներ՝ 25 տոկոս,

3) տարածքային զբաղվածության ծառայության ներկայացուցիչներ՝ 10 տոկոս:

9. Լիազորված մարմինն առաջադրված անձանց թեկնածությունների հիման վրա հաստատում է Խորհրդի անվանական կազմը:

10. Խորհուրդն իր կազմից /բացառությամբ ուսանողության ներկայացուցիչներից/, փակ քվեարկությամբ ընտրում է Խորհրդի նախագահ՝ քվեարկությանը մասնակցած անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ,

11. Խորհրդի անդամի լիազորությունները, լիազորությունների դադարեցման հիմքերը, պարտավորությունները սահմանվում են Հաստատության կանոնադրությամբ:

12. Խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման դեպքում նրան առաջադրող մարմինը 15 օրյա ժամկետում առաջադրում է նոր թեկնածու՝ համաձայն սույն կարգի:

13. Խորհրդի նիստերը գումարվում են Հաստատության կանոնադրությամբ նախատեսված ժամկետներում և դեպքերում՝ Խորհրդի նախագահի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև լիազորված մարմնի, Հաստատության տնօրենի կամ Խորհրդի անդամների 1/3-ի նախաձեռնությամբ:

14. Լիազորված մարմինը կարող է վաղաժամկետ դադարեցնել Խորհրդի լիազորությունները կամ լուծարել Խորհուրդը.

1) Հաստատության կանոնադրությամբ Խորհրդին վերապահված լիազորությունները չկատարելու դեպքում,
2) Հաստատությունը լուծարվելու կամ վերակազմակերպվելու դեպքում: